ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 76 - Ա **12 մայիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ծանրամարտի պատանիների 2016 թվականի մարզային առաջնություն կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ծանրամարտի պատանիների 2016 թվականի մարզային առաջնության մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ծանրամարտի պատանիների 2016 թվականի մարզային առաջնության անցկացման կանոնակարգը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ ապահովել առաջնության մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մայիսի 12-ի
N 76-Ա կարգադրության

ԿԱԶՄ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ծանրամարտի պատանիների 2016 թվականի մարզային առաջնություն կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի

Բաղալյան Գարիկ – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Պողոսյան Անուշ – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Գասպարյան Ավետիք – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ

Զարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Շահբազյան Հասմիկ – մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Քոլոզյան Մարատ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի վարիչ

Առաքելյան Ալեքսան - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

Հակոբյան Հենրիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Ղազարյան Սերյոժա – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

Ղուկասյան Ռուբիկ - Վերին Գետաշեն համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մայիսի 12-ի
N 76-Ն կարգադրության

ԿԱԶՄ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ծանրամարտի պատանիների 2016 թվականի մարզային առաջնության մրցավարական հանձնաժողովի

Չարվադարյան Գեղամ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ /պատասխանատու/

Մնացականյան Ատոմ - Մարտունու քաղաքային մարզադպրոցի ծանրամարտի մարզիչ /համաձայնությամբ/

Մուրադյան Ռուբիկ - Մարտունու քաղաքային մարզադպրոցի ծանրամարտի մարզիչ /համաձայնությամբ/

Սարգսյան Յուրա - Սևանի քաղաքային մարզադպրոցի ծանրամարտի մարզիչ /համաձայնությամբ/

Անդրիկյան Արամ - Սևանի քաղաքային մարզադպրոցի ծանրամարտի մարզիչ /համաձայնությամբ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի մայիսի - 12ի
N 76-Ա կարգադրության

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ծանրամարտի պատանիների 2016 թվականի մարզային առաջնության անցկացման

1. Նպատակը և խնդիրները

Նպաստել՝
- Մարզաձևի մասսայականացման և զարգացման գործընթացին.
- Մարզիկների մրցակցային փորձի ձեռքբերմանը.
- Լավագույն մարզիկների բացահայտմանը, հանրապետական և միջազգային մրցաշարերում մասնակցության ապահովմանը.
- Առաջատար մարզիկների, մարզիչների և մրցավարների միջև փորձի փոխանակմանը:

2.Ծանրամարտի մարզային առաջնության/այսուհետ առաջնություն/ անցկացման վայրը,ժամկետը, քաշային կարգը և թիմերի կազմը

Առաջնությունը կանցկացվի 2016 թվականի մայիսի 14-15-ին Վերին Գետաշեն համայնքի մշակույթի տանը՝ ժամը 12:00-ին / մարզիկների կշռումը ժամը 11:00-ից մինչև 11:30-ը/:

Առաջնությանը մարզիկները կմասնակցեն 30կգ, 34կգ, 38կգ, 42կգ, 44կգ, 46կգ, 50կգ, 56կգ, 62կգ, 69կգ, 77կգ և 77+կգ քաշային կարգերում: Յուրաքանչյուր քաշային կարգում թույլատրվում է հայտավորել 2 մարզիկից ոչ ավել, բայց թիմի կազմը չպետք է գերազանցի 12 մարզիկը:

Թիմերի հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է ավելի շատ 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր գրաված թիմին:

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել մինչև 17 տարեկան պատանիներին:

3. Առաջնության անցկացման և հաղթողների որոշման կարգը

Առաջնությունում յուրաքանչյուր քաշային կարգում անհատական տեղերը որոշվում են ամենաշատ բարձրացված քաշով՝ պոկում, հրում և երկամարտի գումարով: Թիմերի տեղերը որոշվում է մասնակիցների միավորների հավաքած գումարով՝ 1-տեղը 28, 2-րդ-25, 3-րդ-23, 4-րդ-22 և այսպես մինչև 25-րդ տեղը 1 միավոր:

Առաջնությունը անցկացվում է ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կանոնադրության համաձայն:

4. Առաջնության անցկացման ղեկավարությունը

Առաջնության անմիջական անցկացումը ղեկավարում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

5. Պարգևատրումը

Առաջնությունում մրցանակային տեղեր գրված ծանրամարտիկները կպարգևատրվեն համապատասխան հավաստագրերով և հուշանվերներով:

6.Առաջնության մասնակիցների ծախսերը

Մարզիկների, մարզիչների և մրցավարների ճանապարհածախսը և օրապահիկը հոգում են գործուղող կազմակերպությունները:

7. Հայտերը

Առաջնության մասնակիցների անվանական հայտերը՝ հաստատված կազմակերպության ղեկավարի և բժշկի կողմից ներկայացվում են մրցումների օրը: